

# Սահմանադրական արդարադատության որոշ հիմնախնդիրներ

Ալոյան Լևոն Գ.

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցող,

ՀՀ քննչական կոմիտեում քննիչ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0002-1222-4418>

[levon\\_aloyan97@mail.ru](mailto:levon_aloyan97@mail.ru)

ՀՏԳ՝ 342.4; EDN: IVXGIO

DOI: 10.58587/18292437-2025.2-53

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** սահմանադրություն, սահմանադրական արդարադատություն, դատական սահմանադրական վերահսկողություն, օրենքի գերակայություն, մարդու իրավունքներ և ազատություններ, իշխանությունների տարանջատում

## Некоторые проблемы конституционного правосудия

Алоян Левон Г.

Соискатель, Институт философии, социологии и права НАН РА,

В должности следователя Следственного комитета Республики Армения (Ереван, РА)

**Аннотация.** В данной статье автор подробно проанализировал сущность, особенности и миссию института конституционного правосудия.

В статье обосновываются роль и значение конституционного правосудия в деле обеспечения верховенства закона, прав и свобод человека, нормального развития общества, баланса и разделения органов государственной власти и гармоничного сотрудничества.

**Ключевые слова и словосочетания:** конституция, конституционное правосудие, судебный конституционный контроль, верховенство закона, права и свободы человека, разделение властей

## Some problems of constitutional justice

Aloyan Levon G.

The applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of the NAS RA,

Committee of the Republic of Armenia (Yerevan, RA)

**Abstract.** In this article, the author thoroughly analyzed the nature, features and mission of the constitutional justice institution.

The article substantiates the role and importance of constitutional justice in the matter of ensuring the rule of law, human rights and freedoms, normal development of society, balance and division of state power bodies and harmonious cooperation.

**Keywords & phrases:** constitution, constitutional justice, judicial constitutional control, rule of law, human rights and freedoms, separation of powers

### Ներածություն

Սահմանադրական արդարադատությունը ընդհանրապես արդարադատության տեսակներից մեկն է, որն իրենից ներկայացնում է պետական իրավասու մարմինների (սահմանադրական, դատարան, սահմանադրական խորհուրդ) առանձնահատուկ գործառույթ, որը կայանում է օրենքի և այլ իրավական ակտերի սահմանադրականության ստուգում:

Ժողովրդավարական հասարակության բնութագրիչներից մեկը՝ Սահմանադրության գերակայության ապահովումն է ազգային իրավական համակարգում:

### Հիմնական բովանդակություն

Ազգային արդարադատության համակարգում իր ուրույն տեղն ու դերակատարումն ունի սահմանադրական արդարադատությունը [6]:

Սահմանադրական արդարադատությունը, իրենից ներկայացնում է պետական իրավասու մարմինների առանձնահատուկ գործառույթ, որը կայանում է իրավական ակտերի՝ համակարգում սահմանադրության գերակայության ապահովման, հասարակական հարաբերությունների բնագավառում նրա ուղղակի, անմիջական գործողության մեջ: Սահմանադրական արդարադատությունը գործում է հակակշիռների և զսպումների՝ համակարգում, նրա խնդիրն է հայտնաբերել, գնահատել և վերականգնել խախտված՝ հավասարակշռությունը: Սահմանադրության գերակայության ապահովման գործառույթը իրականացնելիս սահմանադրական արդարադատությունը լուծում է նաև լիազորությունների շուրջ ծագած վեճերը, պահպանում իշխանությունների սահմանադրական

տարանջատումը, մարդու սահմանադրորեն ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը դրանով իսկ հանդիսանալով պետական կայունության երաշխիք:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը իրավական պետության գլխավոր բնութագրիչներից մեկը՝ երկրի Հիմնական օրենքի գերակայության ապահովումն է, որով երաշխավորվում է մարդու և քաղաքացիների բնական ու անօտարելի իրավունքների և ազատությունների ճանաչումը, հարգումն ու երաշխավորված պաշտպանությունը, ժողովրդավարության, ապառաջության ու քաղաքացիական համերաշխության սկզբունքների կենսագործումը: Սահմանադրության գերակայության ապահովման խնդրի լուծումը, իր հերթին, ենթադրում է նախ՝ բուն Սահմանադրության մեջ ամրագրել ներսահմանադրական ինքնապատասխանության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ, որոնք կապահովեն սահմանադրական նպատակների, սկզբունքների ու նորմերի ներդաշնակությունն ու ամբողջականությունը, պետական իշխանության հստակ ու հավասարակշռված տարանջատումը, հակակշիռների ու զսպումների արդյունավետ համակարգի առկայությունը: Երկրորդ՝ ձևավորել սահմանադրական վերահսկողության գործուն համակարգ, որում հստակեցված կլինեն սահմանադրական վերահսկողություն և հսկողություն իրականացնող յուրաքանչյուր մարմնի կոնկրետ լիազորություններն ու պարտականությունները» [1, էջ 602]:

Սահմանադրական արդարադատության կողմից օրենքը հակասահմանադրական ճանաչելն ըստ էության նշանակում է օրենքի ուժի դադարեցում: Տվյալ դեպքում պառլամենտի հատուկ հակասահմանադրական օրենքի ուժի դադարեցման մասին որոշման կարիք չկա:

Սահմանադրական արդարադատությունն իրենից ներկայացնում է սահմանադրական վերահսկողության բովանդակության և արդարադատության ձևի համախմբում, որի արդյունքում մենք գործ ունենք պետաիշխանական վերահսկողական գործունեության հատուկ ձևի հետ: Սահմանադրական արդարադատությունը ներառում է իրավական այն նորմերի համակարգը, որոնք կարգավորում են սահմանադրական վերահսկողության պայմանավորված հանրային բնույթի իրավահարաբերությունները և սահմանադրական դատավարության հիմք են հանդիսանում [4, էջեր 100-101]:

Որպես արդարադատության տեսակ սահմանադրական արդարադատությունն օժտված է մի շարք առանձնահատկություններով, ինչպիսիք են սահմանադրական դատարանի առկայությունը և դրա ինքնուրույն անկախ դիրքը դատական մարմինների համակարգում, սահմանադրական դատարանների որոշումների բարձրա-

գույն իրավաբանական ուժը, սահմանադրական արդարադատության իրականացման հատուկ ձևավորված կարգը և այն կարգավորող հատուկ օրենսդրության առկայությունը և այլն: Սրանից կարելի է եզրակացնել, որ սահմանադրական արդարադատությունը սահմանադրական վերահսկողության բարձրագույն ձևն է:

Որպես սահմանադրական արդարադատության մարմին սահմանադրական դատարանն օժտված է մի շարք առանձնահատկություններով: Նախ, սահմանադրական դատարանը լուծում է սահմանադրաիրավական վեճեր, որոնք հիմնականում ծագում են սահմանադրության մեկնաբանության և կիրառության շուրջ, և լիազորությունների տարանջատման շուրջ: Ապա սահմանադրական դատարանը կոչված է ապահովելու սահմանադրության գերակայությունը և նրա ուղղակի գործողությունը իրավակարգավորումների ոլորտում:

Սահմանադրական արդարադատության առաքելությունն, ամենից առաջ նրանում է, որ իր լիազորությունների շրջանակում ապահովվում են նորմատիվ ակտերի համապատասխանությունը երկրի Հիմնական օրենքին, լուծում են պետական իշխանության համակարգում լիազորությունների հարցով առաջացած վեճերը և, որ առավել կարևոր է, հասարակության ներսում առաջացած քաղաքական տարաձայնությունների իրավական կարգավորման երաշխիքներ են ստեղծում: Այլ կերպ, սահմանադրական վերահսկողությունն այն միջոցն ու հնարավորությունն է, որն ապահովում է հասարակության կայունությունը, զարգացման հաջորդայնությունն ու հարընթաց բնույթը:

Սահմանադրական արդարադատությունը նաև խթան է պետական իշխանության համակարգն անընդհատ կատարելագործելու և զարգացող հասարակ կան հարաբերությունների բնույթին ներանակելու համար: Այն ձևավորում է նաև պետական մտածողության ճաշակ ու անհրաժեշտ հասարակական գիտակցություն, ունի լուրջ կանխարգելիչ դեր, երբ հստակ գործող սահմանադրական վերահսկողությունը ոչ միայն պետական իշխանության մարմիններին, այլև հասարակության յուրաքանչյուր անդամի մղում է իրավական, սահմանադրական գործելակերպի:

Սահմանադրական արդարադատության առանցքային հարցերից է նաև, թե ովքեր են դատարան դիմող սուբյեկտները և ի՞նչ կարգով են իրականացնում հատկապես վերացական (աբստրակտ) վերահսկողության իրենց իրավասությունը: Որպես կանոն, դրանց թվին են դասվում պետության գլուխը, պառլամենտը և դրա անդամների որոշակի մասը (սովորաբար 1/5-ը), կառավարությունը, ընդհանուր իրավա-

սության դատարանները, քաղաքացիները, յուրաքանչյուր անձ:

ՀՀ Սահմանադրության 169 հոդվածը սահմանված է, որ սահմանադրական դատարան կարող են դիմել. Ազգային ժողովը, պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Ազգային ժողովի խմբակցությունը, Հանրապետության նախագահը. Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը, տեղական ինքնակառավարման մարմինները, յուրաքանչյուր ոք, գլխավոր դատախազը, Մարդու իրավունքների պաշտպանը, Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները, Հանրապետության նախագահի թեկնածուները, սահմանադրական դատարանի երեք դատավոր՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված դեպքում:

Արդյունավետ սահմանադրական արդարադատությունն անհնար է առանց համակարգի երաշխավորված անկախության:

Ինչպես նշում է, Գ. Հարությունյանը. «սահմանադրական արդարադատության անկախության երաշխիքները կարելի է դասել հետևյալ խմբերի սահմանադրական, օրենսդրա կան, ինստիտուցիոնալ, նյութական եւ սոցիալական: Դրանց ամբողջական հա մակարգի առկայությունը միայն կարող է դառնալ անկախ սահմանադրական արդարադատության գոյության հիմքը: Իրողությունն այն է, որ Հայաստանի Հան ասպետությունում նշված բոլոր հանգամանքները նորովի վերիմաստավորելու անհրաժեշտություն ունեն» [2, էջ 13]:

Սահմանադրական արդարադատության համակարգի զարգացման հեռանկարները սերտորեն առնչվում են դատական իշխանության համակարգի մասին եղած պատկերացումներին ու անկախ դատական համակարգի կայացման ուղ դությամբ ձեռնարկված քայլերին: Դա, առաջին հերթին, սահմանադրական խնդիր է: Սահմանադրությամբ պետք է հստակ ներկայացվի դատական իշխանության անկախության երաշխիքների համակարգը, քանզի միայն անկախ դատական իշխանության պարագայում հնարավոր է կայացնել անաչառ ու արդար որոշումներ, որոնք հասարակության լայն շրջաններում տարակուսանք և այլ մեկնաբանությունների տեղիք չի տա:

Սահմանադրական արդարադատության զարգացման ներկա փուլում բացառիկ նշանակություն ունի նրա վերջնական ակտերի (որոշում, եզրասցություն) իրավաբանական բնույթը [5, էջեր 653-654]: Հրապարակման պահից սահմանադրական արդարադատության ակտերը վերջնական են և վերանայման ենթակա չեն, հակառակ պարագայում սահմանադրական իրավական գործընթացը կծառայի ոչ թե հասարակության բնականոն զարգացմանը, այլ սոցիալ-քաղաքական սրացումների և անհանդուրժողականության:

**Եզրակացություն**

Սահմանադրական արդարադատության հիմնական նպատակն ու առաքելությունը՝ երկրի սահմանադրական կարգի, մարդու բնական և անօտարելի իրավունքների և ասպետությունների պահպանման, ինչպես նաև հասարակության անվտանգության, կայունության և բնականոն զարգացման ապահովման մեջ է:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական խարվունք: Դասագիրք բուհերի համար: – Երևան, 2015:
2. **Հարությունյան Գ.** Սահմանադրական արդարադատության ներկա վիճակը և հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում: // Սահմանադրական դատարան, Տեղեկագիր, №1(18), 2001:
3. **Հարությունյան Գ.** Սամանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: – Երևան, 2016:
4. **Арутюнян Г.** Проблемы совершенствование системы конституционного правосудия// Журнал российского права. № 9, 1999.
5. **Баглай М.В.** Конституционное право Российской Федерации. – М., 2001.
6. **Боботова С.В.** Конституционная юстиция. – М., 1994.

Տճանա/Հանձնվել է՝ 18.02.2025  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 25.02.2025  
 Принята/Ընդունվել է՝ 04.03.2025